

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՓԻՆԵ ԱՐՄԵՆԻ

**ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐԻ ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՏՊԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ**

**ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ,
դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2020

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ИНСТИТУТ ИСКУССТВ**

СИМОНЯН АРПИНЕ АРМЕНОВНА

**ХУДОЖЕСТВЕННОЕ ОФОРМЛЕНИЕ ИЗДАНИЙ
ТИПОГРАФИИ ВАНАНДЕЦИ В АМСТЕРДАМЕ**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата
искусствоведения по специальности**

**17.00.03 - "Изобразительное искусство, декоративное и прикладное
искусство, дизайн"**

ЕРЕВАН-2020

Ատենախոսության թեման հաստատվել է «Մատենադարան» Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՄԱՆՈՒԿՅԱՆ Սեյրանուշ Սոսի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի
արվեստագիտության թեկնածու
ԱՎԱԳՅԱՆ Արթուր Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝

Խ.Արովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020թ. սեպտեմբերի 17-ին ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. օգոստոսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Ասատրյան Ա. Գ.

Тема диссертации утверждена в институте древних рукописей "Матенадаран" имени М. Маштоца.

Научный руководитель –

кандидат искусствоведения, доцент

МАНУКЯН Сейрануш Сосовна

Официальные оппоненты –

член-корреспондент НАН РА,

доктор искусствоведения, профессор

КАЗАРЯН Виген Оганесович

кандидат искусствоведения

АВАГЯН Артур Варданович

Ведущая организация –

Армянский государственный педагогический
университет им. Х. Абовяна

Защита диссертации состоится 17-го сентября 2020г. в 14:00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусства НАН РА.

Автореферат разослан 7-го августа 2020г.

Ученый секретарь специализированного совета,

доктор искусствоведения, профессор



Асатрян А. Г.

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Աշխատությունը նվիրված է ԺԷ-ԺԸ դարերի Արևմտյան Եվրոպայի հայկական տպարանների մեջ առանձնապես ուշագրավ Ամստերդամի Վանանդեցիների տպարանի հրատարակությունների գեղարվեստական հարողարանքին: Վանանդեցիների հրատարակությունները լույս տեսնելով Եվրոպայում՝ իրենց վրա կրել են թե՛ եվրոպական տպագիր գրքի և թե՛ հայ միջնադարյան մանրանկարչության անմիջական ազդեցությունը: Պատկերազարդման համակարգի բաղկացուցիչ մասն են փորագիր զարդանախշերն ու թեմատիկ փորագրապատկերները: Վերջինների հեղինակն է ծագումով գերմանացի, Հոլանդիայում (ներկայումս Նիդերլանդներ) իր գործունեությունը ծավալած, հայտնի փորագրիչ-նկարիչ Քրիստոֆել վան Զիխսեն Կրտսերը (1581-1658 թթ.): Թեմայի արդիականությունը պայմանավորված է հայ տպագրության ժառանգության ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Փաստելի է, որ Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարողարանքը մինչև այժմ համալիր ուսումնասիրության չի արժանացել, և սույն ատենախոսությունն այդ ուղղությամբ կատարված առաջին քայլն է:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է համակողմանի ուսումնասիրել և արվեստաբանական վերլուծության ենթարկել Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարողարանքը՝ դիտարկելով այն եվրոպական տպագիր գրքի և հայ ուշ միջնադարյան մանրանկարչության համատեքստում: Արանից ելնելով՝ նախանշել ենք հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարողարանքի բնութագիրն ու առանձնահատկությունները:
- Բացահայտել և տարբերակել Վանանդեցիների հրատարակություններում գետեղված փորագիր պատկերների տպատախտակների հեղինակներին:
- Պատկերազարական և ոճական հետազոտության միջոցով փորձել գտնել փորագիր պատկերների նախօրինակները և դրանց հեղինակների գեղարվեստական լեզվին բնորոշ առանձնահատկությունները:
- Առավել մանրամասն անդրադառնալ և արվեստաբանական տեսանկյունից քննարկել յուրաքանչյուր փորագրանկարի պատկերագրությունը, խորհրդաբանությունը, ոճը, առանձնացնել դրանց բնորոշ գծերը:
- Վեր հանել Վանանդեցիների հրատարակությունների և արևմտյան տպագիր գրքերի փորագիր պատկերների ընդհանրություններն ու տարբերությունները:

- Բացահայտել Վանանդեցիների հրատարակությունների փորագրապատկերների և հայ ուշ միջնադարյան արվեստի ստեղծագործությունների միջև եղած ընդհանրությունները:

Ուսումնասիրության աղբյուրները և գրականությունը: Ատենախոսության շարադրման համար էական նշանակություն են ունեցել Հայաստանի գիտական հաստատություններում պահվող Վանանդեցիների հրատարակությունների և Եվրոպայի գրադարաններում գտնվող ԺԷ-ԺԸ. դարերի Եվրոպական տպագիր գրքերի փորագրանկարների համեմատական քննությունը: Վանանդեցիների հրատարակությունների մասին տպագիր նյութը բավականին քիչ է: Թեոդիկ, Գարեգին Զարբհանյան, Լեո, Արամ Բաբայան, Առաքել Սարուխան, Գարեգին Լևոնյան, Ռաֆայել Իշխանյան, Վարդան Դերիկյան, Ջոն Լեյն. ահա այն հեղինակների անունները, որոնք հայ տպագրության պատմությանը նվիրված իրենց աշխատություններում պատմական տեղեկություններ են հաղորդում նաև Վանանդեցիների հրատարակությունների մասին: Հայ գիտական շրջանակներում Վանանդեցիների գործունեությունն առավել հանգամանալից ներկայացրել է Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը իր «Նոր նիւթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին» ուսումնասիրության էջերում (Վիեննա, 1963 թ.), որտեղ խոսում է Վանանդեցիների տպարանի հիմնադիր, հրատարակիչ Թովմաս եպիսկոպոս Նուրիջանյանի գործունեության, վերջինիս հիմնադրած տպարանից դուրս եկած հրատարակությունների և տպարանի «ճակատագրի» մասին: Վերը նշված աշխատության մեջ Մեսրոպ Գրիգորյանն ուսումնասիրել և պարզաբանել է միայն Վանանդեցիների հրատարակական գործունեությունն Ամստերդամի տպարանի շրջանակներում: Հայ փայտափորագիր մանրանկարչության վերաբերյալ մի քանի համառոտ ուսումնասիրություններ էլ հրատարակել են Հ. Քյուրոյանը և Ա. Սազգյանը: Փայտի գեղարվեստական փորագրությանը նվիրված առանձին աշխատություն ունի Մ. Ղազարյանը:

Վերջին տարիներին աճել է հետաքրքրությունը հայ տպագիր գրքերի նկարագրողունների նկատմամբ, որի արդյունքում հրատարակվել են տպագիր գրքի պատկերագրողման վերաբերյալ մի շարք հոդվածներ, նաև հայատառ առաջին Աստվածաշնչի փորագրապատկերներին նվիրված երկու պատկերագիրք-ուսումնասիրություններ¹:

¹ **Սիմոնեան Ա.**, Ոսկանեան Աստուածաշնչի պատկերները, խմբագրությամբ եւ առաջաբանով **Գ. Տէր-Վարդանեանի**, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2017: **Ղարիբյան Ն., Սահակյան Ա.**, Ոսկանյան Աստվածաշնչի պատկերագրությունը. Եվրոպական արվեստի զուգահեռներով, Երևան, 2018: Նախքան այս աշխատության հրատարակությունը մեր կողմից առաջին անգամ ուսումնասիրված փորագրանկարների մասնագիտական քննությունը, որը ներառվել էր **Սիմոնեան Ա.**, Ոսկանեան

Ուսումնասիրողների ուշադրությունից դուրս է մնացել ԺԷ. դարի ոչ միայն հայ, այլ նաև եվրոպական փորագրարվեստի կարևոր էջերից մեկը՝ Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարդարանքը:

Ուսումնասիրության մեթոդները: Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ և բազմալեզու ուսումնասիրությունների և գիտական հոդվածների հիման վրա: Աշխատանքի հիմքում ընկած է արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդը: Օգտագործված են նկարագրական, պատկերագրական, ոճական, ձեռագրագիտական, զուգադրահամեմատական, աղբյուրագիտական, տեխնիկա-տեխնոլոգիական մեթոդները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարդարանքի քննությանը նվիրված աշխատություններ, որոնցում պետք է լուսաբանվեին այդ հրատարակությունների թեմատիկ փորագրանկարներն ու զարդանախշերը՝ հիրավի բացակայում են: Այս տեսանկյունից սույն աշխատանքի արդյունքները կլրացնեն ինչպես հայ արվեստի պատմության ու տեսության, մասնավորապես՝ գրատպության, հայ գրքի և հայ-եվրոպական փոխառնչությունների պատմության էջերը, այնպես էլ հիմք են հանդիսանալու նոր ուսումնասիրությունների համար: Նյութը գործնականում կարող է կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ինչպես հայ, այնպես էլ այլազգի արվեստաբանների և մշակութաբանների համար: Այն կարող է դառնալ նաև ապագա արվեստաբանների ուսումնական ծրագրի մաս:

Աշխատանքի գիտական նորույթը.

- Սույն ատենախոսությունն առաջին համեստ փորձն է առավել ամբողջական և ընդգրկուն դիտարկելու Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարդարանքը՝ եվրոպական տպագիր և հայկական ուշ միջնադարյան մանրանկարչության գեղարվեստական ձևավորման համատեքստում:
- Ատենախոսության թեման ինքնին նորույթ է հայ արվեստաբանության մեջ, քանի որ նախկինում Վանանդեցիների հրատարակությունների գեղարվեստական հարդարանքը չի արձարծվել նման ընդգրկումով և հարցադրմամբ:
- Բացահայտվել և տարբերակվել են Վանանդեցիների հրատարակություններում զետեղված փորագիր պատկերների տպատախտակների (կլիշեների) հեղինակները, նախօրինակները և աշխարհագրությունը:

Աստվածաշնչի պատկերները 2017 թ. հրատարակած գրքում, դարձել էր սույն ատենախոսության բուն ատաղծը:

- Առաջին անգամ վերլուծվել է փորագրապատկերների ստեղծման եղանակը և ոճական, կերպարային առանձնահատկությունները, վերջիններիս պատկերագրությունը, խորհրդաբանությունը, առանձնացվել են դրանց բնորոշ գծերը:
- Փորձ է արվել վեր հանել Վանանդեցիների հրատարակությունների արժանի տեղը ոչ միայն հայկական, այլև եվրոպական տպագրավեստում:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության են երաշխավորել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի «Ձեռագրագիտության» և «Արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրության» բաժինները: Թեմայի դրույթներն առանձին հոդվածների տեսքով տպագրվել են գիտական պարբերականներում և ժողովածուներում: Մեծապես կարևորում ենք նյութի ուսումնասիրման և ամբողջացման համար Erasmus+ ծրագրի շրջանակում 2018 թ. ապրիլ-հուլիս ժամանակահատվածում Բելգիայի Թագավորության Լուվենի կաթոլիկ համալսարանի Արևելյան լեզուների բաժնում մեր կատարած հետազոտությունները՝ պրոֆեսոր Բեռնար Քուլիի ղեկավարությամբ: Աշխատության համար շահեկան էր նաև Բելգիայի Ազգային գրադարանի Եվրոպական հնատիպ գրականության բաժնում հատկապես փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի տպագիր ժառանգության համապատասխան ուսումնասիրությունը: Տվյալ թեմայի շրջանակներում նյութեր են ներկայացվել հանրապետական և միջազգային գիտաժողովների գեկուցումներն ամփոփող ժողովածուներում: Սույն թեմային վերաբերող բաժիններից մեկը մասամբ հրատարակվել է պատկերագիրը-ուսումնասիրության տեսքով (**Սիմոնեան Ա.**, Ոսկանեան Աստուածաշնչի պատկերները, խմբագրութեամբ ու առաջաբանով **Գ. Տէր-Վարդանեանի**, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2017):

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Աշխատանքի ծավալը 154+76 էջ է: Ատենախոսության կառուցվածքը բխում է առաջադրված նպատակից, քննարկվող խնդիրներից և արդյունքներից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից: Ատենախոսության բնագրին հաջորդում է օգտագործված ձեռագիր մատյանների, հնատիպ գրականության, ապա հայերեն և օտար լեզուներով գրականության և էլեկտրոնային կայքերի ցանկը (216): Ատենախոսությանը կցել ենք հավելված, որտեղ գետեղված են փորագիր պատկերների, դրանց հետ համեմատվող ձեռագիր օրինակների և որմնանկարների վերատպությունները (146):

Ներածության մեջ համառոտ ներկայացվում է հայ գրավոր մշակույթում ձեռագիր մատյաններից անցումը տպագիր գրքին, թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական

հենքը, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐԸ

1.1 Հայ տպագրության սկզբնավորումը

Առաջին հայ տպագրիչը, որին հաջողվեց Եվրոպայում հիմնել տպարան և հրատարակել հայերեն գրքեր, Ջուղայեցի (ենթադրաբար) Հակոբն էր, որը հայտնի է նաև Հակոբ Մեղապարտ անունով: Մեզ են հասել Հակոբ Մեղապարտի տպագրած հինգ անուն գրքեր՝ *Ուրբաթագիրք, Պատարագավերբ, Աղթարք, Պարզապումար, Տաղարան*: Առաջին այս հինգ գրքերի և ընդհանրապես ԺՁ դարի հայկական հրատարակությունների յուրահատկություններն այն են, որ սկսած Գուտենբերգից՝ ավելի քան կես դար, տպագրիչներն աշխատում էին, որ տպագրած գրքերը հնարավորինս նման լինեին ձեռագրերին: Կեսդարյա դադարից հետո Հակոբ Մեղապարտի գործը շարունակում է Աբգար Եվրոկացին, որը պատմության մեջ ավելի հայտնի է Աբգար Դպիր անունով: Վերջինս 1565 թ. մի թղթի վրա լույս է ընծայում հայերեն առաջին տպագիր օրացույցը՝ *Խառնայինթուր րումար գեղեցիկ և պիտանի* անվանումով: Այնուհետև Աբգարը մեկը մյուսի հետևից տպագրում է *Սաղմոսարան, Փոքր քերականութիւն, Տօնացոյց, Պարզապումար, Աղթթամսարոյց ու Պատարագամսարոյց (մի գրքով), Տաղարան և Մաշտոց* գրքերը: Աբգարի որդի Սուլթանշահը համարվում է նրա գործի անմիջական շարունակողը: Սուլթանշահը աշխատում է Հովհաննես քահանա Տերգնցու հետ: Այս երկուսի ջանքերով 1584 թ. Հռոմի Դոմինիկ Բազայի տպարանում հրատարակվում է Գրիգոր ԺԳ. Պապի կազմած նոր տոմարի հայերեն թարգմանությունը՝ *Տոմար Գրիգորեան յախրենական*: 1584 թ. Սուլթանշահն ու Տերգնցին տպագրում են նաև մեկ ուրիշ գիրք՝ *Դասանութին ուղղափառութեան*, իսկ 1586 թ. Սուլթանշահը հրատարակում է *Մաշտոցի* մի հատված: 1587 թ. Տերգնցին լույս է ընծայում Սաղմոսարան, որտեղ առկա են Տերգնցու և նրա որդու դիմապատկերները: Հովհաննես Տերգնցու գործունեությամբ ավարտվում է հայերեն տպագիր գրքի պատմության վաղ շրջանը: Այս շրջանում տպագրված գրքերի թիվը թեև մեծ չէ, սակայն այդ հրատարակությունները կարևոր են նրանով, որ դրանց հիման վրա է ստեղծվում հայերեն տպագրության ավանդույթը:

1.2 Ամստերդամի հայկական տպարանի պատմությունը

Ամստերդամի հայկական տպարանը հիմնել է Մատթեոս Ծարեցին, Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու հանձնարարությամբ՝ 1660 թ.: Անդրանիկ

հրատարակությունը Ներսես Շնորհալու *Յիսուս Որդին* էր, որը Ծարեցու մահից հետո 1661 թ. լույս է ընծայում վաճառական Ավետիս Դիճենցը (Ոսկան Երևանցու եղբայրը): 1664 թ. տպարանի տնօրինությունը ստանձնում է Ոսկան Երևանցին: «Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Զորավար» տպարանն Ամստերդամում, Լիվոռնոյում և Մարսելում գործել է 26 տարի (1660-1686 թթ.) և, ըստ մատենագիտական ցանկերի, տպագրել ճիշտ քառասունինը հայերեն գիրք, որը հայ տպագրության պատմության մեջ աննախադեպ էր: Միայն Ոսկան Երևանցուն հաջողվեց տպագրել թե՛ *Աստվածաշունչը* և թե՛ շատ այլ գրքեր (*Սաղմոսարան, Ժամագիրք, Շարակնոց, Մաշտոց, Նոր Կտակարան, Ոսկան Երևանցու Քերականութեան գիրքը, Մովսես Խորենացուն վերագրող Աշխարհացոյցը, Առաքել Դավրիժեցու Գիրք Պարմութեանցը*), որովհետև վերջինս կարողացավ մի կողմից շատ ճկուն ձևով օգտագործել իր եղբայր Ավետիսի և ջուղայեցի այլ առևտրականների նյութական հնարավորությունները, մյուս կողմից՝ ինչ որ ձևով կազմակերպեց իր տպագրած գրքերի տարածումը և վաճառքը: Ոսկանյան *Աստվածաշունչը* (1666-1668 թթ.) ուշագրավ օրինակ է նախ և առաջ օգտագործված փորագիր պատկերների հարստությամբ, որոնց քանակը Հին կտակարանում 51 է, իսկ Նոր Կտակարանում՝ 107: Այն տպագրվել է ժամանակի համար աննախադեպ տպաքանակով՝ 5000 օրինակ:

1.3 Թովմաս Վանանդեցու գործունեությունը և Վանանդեցիների հրատարակություններն Ամստերդամում

Այս ենթագլխում հանգամանալից ներկայացված են «Սուրբ Էջմիածին և Սուրբ Սարգիս Զորավար» տպարանի պատմության մեջ իր հրատարակչական գործունեությամբ առանձնացված Գողթն գավառի Սբ. Խաչ վանքի եպիսկոպոս Թովմաս Վանանդեցի Նուրիջանյանի և նրա զարմիկների՝ Ղուկաս և Միքայել Վանանդեցիների, նաև մորեղբոր որդու՝ Մատթեոս Վանանդեցու գործունեությունը և հրատարակությունները: Քսաներկու տարիների ընթացքում (1695-1717 թթ.) Վանանդեցիները հրատարակել են 20 գիրք և մեկ **«Համադարած աշխարհացոյց»** անունը կրող հայատառ առաջին տպագիր քարտեզ: Քարտեզի փորագրիչներն են եղել Ադրիան և Պետրոս Սկոմբեկ եղբայրները, որոնք աշխատել են Ղուկաս Վանանդեցու անմիջական ղեկավարությամբ: Վանանդեցիների բոլոր հրատարակությունները աչքի են ընկնում իրենց փորագրարվեստով և շքեղ պատկերազարդմամբ: Վանանդեցիները զարգացրին ոչ միայն հայկական տպագրությունը, այլ նաև զարկ տվեցին հայագիտության տարածմանը Եվրոպայում: Վերջիններիս գլխավորած տպարանը ապահովում էր նաև հայ գրքի մեծ տպաքանակ (ԺԶ-ԺԷ. դարերում հայերեն գրքի բազմացման հարցը կարևոր, զուցե և ճակատագրական դեր ուներ Հայաստանի և հայկական գաղութների համար)՝ լույս ընծայելով հիմնականում երկու բնույթի՝ կրոնական-եկեղեցական և աշխարհիկ գրքեր: Վանանդեցիները առաջիններից էին, որ սկսեցին հրատարակել ժամանակակից հեղինակների գործերը՝

անմասն չմնալով ժամանակի հասարակական կյանքից: Վանանդեցիների տպարանից լույս ընծայվեցին Շրեոդերի *Արամեան լեզուի գանձ գիրքը*, Լակրոզ Գաղիացու *Քրիստոնյաների պատմությունը* Էֆրոպիայում և Հայաստանում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՊՏՏԿԵՐԱԶԱՐԴՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Պատկերազարդման առումով մեծ հետաքրքրություն ունեն Վանանդեցիների հրատարակած գրքերում առկա բազում զարդանախշերը: Վերջիններիս կապը հայ ձեռագրավեստի զարդարուն տարրերի՝ հատկապես լուսանցազարդերի, զարդագրերի, գլխազարդերի հետ տակավին սերտ է, սակայն այդ ամենի հետ կան նաև այնպիսիք, որոնք բնորոշ են միայն տպագիր գրքի պատկերազարդման արվեստին:

2.1 Վանանդեցիների հրատարակությունների պատկերազարդման համակարգի կառուցվածքը

Վանանդեցիների հրատարակած գրքերի քննության արդյունքում ակնհայտ դարձավ, որ վերջիններիս հրատարակություններում գեղարվեստական համակարգը հիմնականում ընդհանրական է: Գրքերում յուրաքանչյուր գլուխ ավարտվում է վերջնազարդով, իսկ յուրաքանչյուր նոր գլուխ սկսվում է անվանաթերթով՝ ձևավորված գլխազարդով (նաև կիսախորանածև), շքեղ գլխատառով, զարդագրերով և խաչով ավարտվող լուսանցազարդով: Երբեմն երկու առանձին ենթավերնագրեր անջատված են միջնազարդերով:

Գրքերի տիտղոսաթերթերը հատուկ գեղարվեստական ձևավորում չունեն, հիմնականում պարզ են: Բացառություն են կազմում միայն 1702 թ. հրատարակված Շարակնոցը և 1705 թ. ժամագիրքը: Վանանդեցիների հրատարակություններում զետեղված և՛ թեմատիկ փորագրանկարները, և՛ զարդանախշերի մեծ մասը վերցված են փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխսեն Կրտսերի 1646 թ. *Bible Tresoor* և 1648թ. *Bible Sacra* հրատարակություններից:

Թովմաս Վանանդեցու հրատարակած գրքերում օգտագործված **ճակատագրազարդերը՝ կիսախորանի կամ առավել հաճախ ուղղանկյուն գլխազարդի** տեսքով են: Ձևավորման ոճով կիսախորանները նմանություն ունեն Հեթում Բ.-ի Աստվածաշնչի (այժմ՝ *Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև ՄՄ) ձեռ. 180*), Սարգիս Պիժակի ձեռագրերի, Վասպուրականի (*ՄՄ ձեռ. 982*), Ղրիմի, Նոր Զուղայի մանրանկարչական դպրոցների (*ՄՄ ձեռ. 980*), ավելի ուշ շրջանի ձեռագրերի կիսախորաններին: Գեղարվեստական հարդարանքում մեծ տեղ են գրավում զարդագիր գլխատառերը (հիմնականում հանդիպում են թռչնագրեր, կենդանագրեր), որոնց հորինվածքները ևս

վերցված են հայկական մանրանկարչությունից: Վանանդեցիների հրատարակություններում հանդիպում է **զարդագրի մեկ այլ տեսակ**, որը բուսական, մարգարենների կամ առաքյալների փորագրանկարների հենքին պատկերված երկաթագիր է: Զարդագրի այս տեսակը, որն իր զուգահեռը չունի հայկական մանրանկարչության մեջ, ծագում է **գորթական մանրանկարչությունից**:

Վանանդեցիների հրատարակած գրքերում օգտագործված **լուսանցագարդերը** մեծամասամբ բուսական հորինվածքներ են, որոնց հիմքում հաճախ Կենաց ծառի խորհրդանիշն է, ինչը զարդարվեստում երևան է գալիս ամենաբազմազան ձևերով: Հայկական մանրանկարների նման շատ հաճախ դրանք դուրս են գալիս սափորի ձև ունեցող անոթներից կամ որևէ ճարտարապետական հիմք-պատվանդանից, որը սերում էր եվրոպական արվեստից: Լուսանցագարդերն իրենց ոճով որոշակի նմանություն ունեն Սարգիս Պիծակի ձեռագրերի, ինչպես նաև Հեթում Բ. թագավորի Աստվածաշնչում զետեղված (**ՄՄ ձեռ. 180**) լուսանցագարդերի հետ: Հարկ է նշել, որ Սարգիս Պիծակի մանրանկարչական արվեստում լուսանցագարդերն այնքան էին տիպականացված, որ հետագայում դրանք վերածվել են տպատպատակների (կլիշեների) և օգտագործվել հայկական առաջին տպագիր գրքերի պատկերագրողման մեջ:

Արվեստաբանական տեսանկյունից հետաքրքիր են նաև Վանանդեցիների գրքերում օգտագործված **վերջնագարդերը**, որոնք բաժանվում են երկու խմբի՝ **պարզ և շքեղ**: Դրանք, ըստ երևույթին, ծագում են Արևմուտքից, քանի որ հայկական ձեռագրերում բնագիրն ավարտվում էր ոչ թե բուսական նախշով, այլ դասավորվում էր երկրաչափական մարմնի, երբեմն խաչի տեսքով:

Պատկերագրողման համակարգի մեջ է մտնում Թովմաս Վանանդեցու **դպարանանշանը**: Այն վերջնագարդի տեսք ունի, կենտրոնում՝ քառակուսի թագով պսակված շրջանակի մեջ պատկերված է ճարտարապետական կառույց, որի երկու կողմում գրված են Թ և Ն գլխատառերը, դրանք Թովմաս Վանանդեցու անվան և ազգանվան սկզբնատառերն են (**Թովմաս Նուրիջանյան**):

Վանանդեցիների հրատարակությունների պատկերագրողման հարդարանքի առանձնահատկությունների քննությամբ պարզ է դառնում, որ խորանների, գլխագարդերի, զարդագրերի, լուսանցագարդերի վրա գալի է հայկական միջնադարյան մանրանկարչության անմիջական ազդեցությունը: Այդպիսի զարդագրեր, գլխագարդեր, լուսանցագարդեր կարող էր ստեղծել հայոց ձեռագրական արվեստին տեղյակ ծաղկող-փորագրիչ, որպիսիք կարծում ենք, կարող էին լինել նկարիչ-հրատարակիչներ Մատթեոս Ծարեցին, Մատթեոս, Ղուկաս Վանանդեցիները: Սա նշանակում է, որ հայ հնատիպ գրքի հրատարակիչները միաժամանակ հանդես են եկել որպես տվյալ գրքերը ձևավորող արվեստագետներ: Ինչ վերաբերում է տիտղոսաթերթերի, գլխատառերի, վերջնագարդերի ձևավորմանը, ապա կարող ենք ասել, որ դրանց ձևավորման համար

հիմք են հանդիսացել ԺԶ-ԺԷ. դարի արևմտաեվրոպական տպագիր գրքերի գեղարվեստական հարդարանքի տարրերը:

2.2 Վանանդեցիների հրատարակած գրքերի փորագրանկարների նախօրինակները

Այս ենթագլուխը սկսվում է ներածական մատով, որտեղ ընդհանրական ձևով ներկայացվում են փայտե երկայնակի փորագրության (քսիլոգրաֆիայի) տեխնիկայի առանձնահատկությունները: Մանրամասն շարադրված է Վանանդեցիների հրատարակությունների բաղկացուցիչ մասը կազմող թեմատիկ փորագրապատկերների հեղինակի՝ ծագումով գերմանացի, իր գործունեությունը Հոլանդիայում ծավալած Քրիստոֆել վան Ջիխեն Կրտսերի (1581-1658 թթ.) կենսագործունեությունը, վերջինիս հրատարակությունները և այդ հրատարակություններում զետեղված փորագրանկարների նախօրինակները:

Քրիստոֆել վան Ջիխեն Կրտսերը կամ «հոլանդացի Դյուրերը» հայտնի է եղել որպես գրքեր նկարազարդող (ունի շուրջ 1200 փայտե փորագրություն): Վան Ջիխենի փորագրանկարների մի մասը անմիջական կրկնօրինակներ են Հիերոնիմուս Ջերոմ կամ Ժերոմ Նադալի (1507-1580 թթ.) հայտնի **Պատկերազարդ Ավետարանից**: Գրքում օգտագործված են 153 փորագիր պատկեր, որոնց նախօրինակների հեղինակն է իտալացի գեղանկարիչ Բեննարդինո Պերսեն: Փորագրապատկերներն արտացոլում են Քրիստոսի կյանքը՝ բարոկկո ոճով և համադրված են բնագրի հետ: Քրիստոֆել վան Ջիխեն Կրտսերը, կրկնօրինակումներ է կատարել նաև ԺԶ-ԺԷ. դարերի ֆլամանդացի հայտնի փորագրիչներ՝ Ալբրեխտ Դյուրերի, Հենդրիկ Գուցիուսի, Լուկաս վան Լեյդենի, Հանս Հոլբայնի, Յոհան Սադելեր Ավագի, Կրիսպին վան դը Բրուսկի, Հանս Մեմլինգի, Մարտին դը Վոսի, Հյուգո վան դը Գոսի ստեղծագործություններից: Մի շարք նկարիչների անվանատառերը Քրիստոֆել վան Ջիխեն Կրտսերը թողել է նրանց պատկերներից արված փորագրանկարների վրա, ինչպես օրինակ՝ AD - Ալբրեխտ Դյուրեր, HG - Հեն(դ)րիկ Գուցիուս, որոնց կից դրել է նաև իր ստորագրությունը՝ CVS: Քրիստոֆել վան Ջիխեն Կրտսերը, հավանաբար, ծանոթ է եղել նաև ֆրանկ-ֆլամանդացի փորագրիչ, ոսկերիչ Թեոդոր դե Բրայի (1561-1623 թթ.) 1609 թ. Գերմանիայի Մայնց քաղաքում հրատարակած լատիներեն Աստվածաշնչի փորագրապատկերներին: Ոսկանյան և Վանանդեցիների յուրօրինակ հրատարակությունները խթան հանդիսացան ԺԷ-ԺԸ. դարերի հայ գրքարվեստի գեղարվեստական նոր ձևերի մշակման, ձևավորման և զարգացման համար: Եվրոպական փորագրանկարների՝ հատկապես Քրիստոֆել վան Ջիխեն Կրտսերի ստեղծագործությունների պատկերազարդման ձևերով ԺԷ. դարի առաջին քառորդում սկսվում է հայկական Աստվածաշնչերի նկարազարդումը: Մեզ են հասել մի շարք ձեռագիր Աստվածաշնչեր, Ավետարաններ, Խորհրդատետրեր, որոնց

պատկերազարդումների համար նախօրինակներ են հանդիսացել եվրոպական փորագրանկարները: Եվրոպական արվեստի այս շարժումը սկիզբ առավ Լեհաստանից և անցավ Կոստանդնուպոլիս, Սպահան: Շարժումը նույնիսկ իր ազդեցությունն ունեցավ հայկական եկեղեցիների որմնանկարչության վրա, որի լավագույն օրինակը Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Ս. Հովսեփ Արիմաթացի և Ս. Բեդթեհեմ եկեղեցիների որմնանկարներն են:

Ինչ վերաբերվում է ձեռագրական արվեստին, ապա կարող ենք ասել, որ ժԷ. դարում Նոր Զուղայում և Կոստանդնուպոլսում նկարազարդված Աստվածաշնչերը պատկերազարդման տեսանկյունից բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբը նկարազարդվում էր Ալբրեխտ Դյուրերի և նրա հետևորդների սկզբունքներով, այդ թվում նաև՝ ամստերդամյան հրատարակությունների փորագրապատկերների օրինակով, իսկ մյուսը՝ Թեոդոր դե Բրայի Աստվածաշնչի հիման վրա: Մաշտոցյան Մատենադարանում պահվող (ՄՄ ձեռ. 201, 204, 349, 389, 3807, 6765, 6772,) Աստվածաշնչերում, Ավետարաններում, Խորհրդատետրերում գետեղված մի շարք մանրանկարներ իրենց պատկերագրությամբ ուղղակիորեն կրկնում են Վանանդեցիների հրատարակությունների մի շարք փորագրապատկերները՝ հատկապես Հովհաննու Հայտնության նկարազարդումները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայտնության նկարազարդումների համար նախօրինակ են հանդիսացել միայն եվրոպական փորագրանկարները, քանի որ հայ ձեռագրարվեստում մինչ ժԷ. դարը Հայտնության պատկերներ գրեթե չկան:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՎԱՆԱՆՂԵՑԻՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Ատենախոսության ամենաընդարձակ մասն է՝ բաղկացած չորս ենթազվից:

Այս գլխում անդրադարձել ենք հիմնականում 1702 թ. հրատարակված Շարակնոցում և 1705 թ. Ժամագրքում գետեղված սուրբգրային թեմաներով փորագրապատկերներին, որոնց մեծ մասը նաև օգտագործված է Վանանդեցիների մյուս հրատարակություններում: Քրիստոֆել վան Զիխեմ Կրտսերը այս փորագրանկարները ստեղծել է ԺՁ-ԺԷ. դարերի նիդերլանդացի և ֆլամանդացի հայտնի փորագրիչների գործերի հիման վրա: Փորագրանկարների շարքում կան նաև այնպիսիները, որոնք չունեն նախօրինակներ, այսինքն՝ համարվում են Քրիստոֆել վան Զիխեմ Կրտսերի հեղինակային ստեղծագործությունները:

3.1 Հինկտակարանային պատկերներ

Ենթազվիտում ներկայացվում են Վանանդեցիների հրատարակություններում գետեղված հինկտակարանային մի շարք տեսարաններ, ինչպես օրինակ՝ Ադամի և Եվայի

պատմությանը նվիրված փորագրանկարներ: Դրանց շարքում կան այնպիսիները, որոնք Վանանդեցիների հրատարակությունների միջոցով առաջին անգամ են իրենց արտահայտությունը գտնում հայ արվեստի ստեղծագործություններում: Ինչպես այս ենթագլխում, այնպես էլ հաջորդ երկու ենթագլուխներում թեմատիկ փորագրանկարները ենթարկվել են պատկերագրական, կերպարային, ոճական մանրամասն վերլուծության: Զուգադրահամեմատական քննության մեթոդով ներկայացրել ենք յուրաքանչյուր փորագրապատկերի նախօրինակը, հեղինակին, այդ պատկերների արտացոլումը ոչ միայն հայ ուշ միջնադարյան կերպարվեստում (ձեռագրերում, որմնանկարներում, կիրառական արվեստում), այլ նաև եվրոպական հուշարձաններում:

3.2 Ավետարանական թեմաներով պատկերներ

Այս ենթագլխում ներկայացված է Քրիստոսի երկրային և երկնային կյանքին նվիրված փորագրանկարների ընդարձակ շարքը: Քրիստոսի վան Զիխեմ Կրտսերի փորագրապատկերներն ունեն ընդգծված արևմտյան պատկերագրություն. դրանք աչքի են ընկնում տեսարանի կանոնական պատկերագրության մեջ հեղինակի կողմից ներմուծված կերպարներով կամ այլ մանրամասնություններով, հագեցած են ավելի հարուստ խորհրդաբանությամբ (Արևմուտքում պատկերագրությունն ավելի ազատ էր, քան Արևելքում): Մանրամասն դիտարկված են յուրաքանչյուր տեսարանի կանոնական, նոր, արևմտյան և արևելաքրիստոնեական պատկերագրական զծերը: Անդրադարձել ենք նաև ավետարանիչներին պատկերող փորագրապատկերներին: Այս ենթագլուխը արվեստաբանական, պատկերագրական վերլուծության տեսանկյունից ատենախոսության ամենաձավալուն և կարևոր մասերից է:

3.3 Սուրբ Հովհաննես առաքյալի և աստվածաբան ավետարանչի Հայտնության գրքի նկարագրողումները

Թեմատիկ փորագիր պատկերների շարքում առանձնահատուկ են Հովհաննեսի Հայտնության նկարագրողումները: ԺԷ. դարի առաջին քառորդի հայերեն ձեռագիր Աստվածաշնչերի Հայտնության մանրանկարների նկարագրողման վրա անմիջական ազդեցություն են ունեցել Վանանդեցիների և Ոսկանյան հրատարակություններում զետեղված՝ Հովհաննու Հայտնության փորագրանկարները: Քրիստոսի վան Զիխեմ Կրտսերի Հայտնության փորագրանկարները տպագիր գրքի միջոցով թափանցեցին ուշ շրջանի հայ ձեռագրարվեստ: Ինչպես վերը նշեցինք (ավելի մանրամասն տե՛ս 2.2 ենթագլխում), Հայտնության նկարագրողումների համար նախօրինակ են հանդիսացել միայն եվրոպական փորագրանկարները, քանի որ հայ գրքարվեստում մինչ ԺԷ. դարը Հայտնության պատկերներ գրեթե չեն հանդիպում: Օրինակ՝ *ՄՄ ձեռ. 349, ՄՄ ձեռ. 351*

Աստվածաշնչերում, **ՄՄ ձեռ. 389** Խորհրդատետրում Հայտնության տեսարանները գրեթե նույն կերպ են պատկերված, ինչ Վանանդեցիների փորագրանկարներում:

Վանանդեցիների հրատարակություններում զետեղված են Զիխեմի այն փորագրանկարները, որոնք ստեղծվել են ոչ միայն Ալբրեխտ Դյուրերի հայտնի «Ապոկալիպսիս» (բաղկացած 15 փորագրերից՝ ստեղծված 1496-1498 թթ.) շարքի, այլև ֆլամանդացի հայտնի փորագրիչներ՝ Յոհան ավագ Սադելերի և Մարտին դը Վուսի Հովհաննու Հայտնությունը պատկերող փորագրությունների հիման վրա:

3.4 Վանանդեցիների հրատարակությունների փորագրանկարների ոճական և կերպարային բնութագիրը

Վանանդեցիների հրատարակած գրքերի փորագրապատկերները ստեղծված են ԺԷ դարի կեսերին՝ բարոկկո ոճի ժամանակաշրջանում: Փորագրանկարները հիմնականում վերաբերում են սուրբգրային պատկերագրական շարքին և աչքի են ընկնում հագեցած գեղազարդայնությամբ (դեկորատիվությամբ): Ներկայացված տեսարանների պատկերագրությունն ու ոճը արտացոլում են ԺԶ դարավերջի և ԺԷ դարի առաջին կեսի Հոլանդիայի, և առհասարակ, Հյուսիսային Եվրոպայի կերպարվեստի հատկանշական գծերը: Փորագիր պատկերները հիմնականում բազմակերպար, բարդ կառուցվածք ունեցող հորինվածքներ են, որոնց հավասարակշռությունն ու կայունությունը գրեթե միշտ խախտվում են անկյունագծերով տեղադրված կերպարների միջոցով: Գլխավոր գործողությունը հիմնականում պատկերվում է առջևի հատվածում: Հորինվածքը կատարված է ուղիղ հեռանկարի կանոններով, ամենայն մանրամասնությամբ՝ սկսած հեռվում երևացող ճարտարապետական կառույցներից մինչև առաջնամասում պատկերված գլխավոր անձանց խոշոր պատկերները:

Փորագրապատկերներում կարևոր տեղ է գրավում նաև ետնախորքը, որտեղ երևում են ճարտարապետական շինություններ, բնապատկեր, մարդկային խմբեր, Քրիստոսի կյանքի հետ կապված փոքրաչափ այլ տեսարաններ: Դրանք, եվրոպական արվեստ արդեն վաղուց ներմուծված ուղիղ հեռանկարի կանոնների համաձայն, հեռանալով պատկերված են ավելի փոքր: Չնայած հորինվածքների հագեցվածությանը՝ անգամ ամենափոքր տարրը մշակված է ամենայն մանրամասնությամբ. տարածության յուրաքանչյուր հատված փորագրիչը օգտագործել է: Հորինվածքները, որպես կանոն, դինամիկ են, շարժուն: Շարժման արտահայտչականությունը, հորինվածքային տարրերի բազմազանությունը, շրջապատող առարկաների հստակ վերարտադրումը, տարածության հրաշալի տիրապետումը խոսում են Քրիստոֆել վան Զիխեմ փորագրիչ-վարպետի հմտության մասին: Փորագրանկարում վառ կերպարը և էմոցիոնալ հագեցվածությունը հնարավորություն են տալիս փորագրիչին արտահայտել կերպարների բնորոշ գծերը: Պատկերված են բարոկկոյի ժամանակաշրջանին բնորոշ հագուստներով

և սանրվածքով, բարդ դիրքերով՝ տարբեր մեկնաբանությամբ. մեկ մեղմ, բնական, զգացմունքների ավելի զուսպ վերարտադրությամբ, մեկ՝ բուռն, անհանգիստ: Մի կողմից կերպարները կարծես իրական կյանքից վերցված լինեն, մյուս կողմից՝ դրանց շարժումն ու ներքին կեցվածքը չափազանցված է: Փորագրանկարներում կիրառված անկյունագծով, կլորավուն գծերի, ինչպես նաև լուսաստվերային խաղի միջոցով փորագրիչը կարողացել է ստեղծել շեշտված արտահայտչականությամբ (էքսպրեսիվ) կերպարներ: Սակայն որոշ փորագրանկարներում կերպարները պատկերված են շատ ընդհանրացված՝ առանց դեմքերի բնութագրման: Մի շարք ստեղծագործություններում հեղինակը գործողությունը տեղափոխել է իր ժամանակի մեջ՝ մեկնաբանելով այն ժամանակակից ճարտարապետական շինությունների հենքի ներքո կամ շինությունների ներսում՝ պատկերելով իրեն ժամանակակից և հարազատ միջավայր, աստվածաշնչյան տեսարանին հաղորդելով իրական բնույթ, ժամանակակից հնչեղություն:

Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի փորագրապատկերները Ալբրեխտ Դյուրերի և ԺԶ-ԺԷ դարերի ֆլամանդացի հայտնի փորագրիչներ Յոհան Սադելերի, Կրիսպին վան դը Բրոսկի, Հանս Մեմլինգի, Մարտին դը Վոսի, Հյուգո վան դե Գուսի, Վիերիքս ընտանիքի ներկայացուցիչներ՝ Հիերոնիմուս և Յովհաննես եղբայրների ստեղծագործությունների համեմատությամբ թույլ են տեխնիկական վարպետության և հուզական հագեցվածության տեսանկյունից: Չնայած Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի և Ալբրեխտ Դյուրերի փորագրանկարներում ներկայացված է տեսարանների միևնույն պատկերագրությունը, բայց և այնպես դրանք միմյանցից տարբերվում են կերպարների փոփոխված մեկնաբանմամբ և կատարողական վարպետությամբ: Ալբրեխտ Դյուրերն իր աշխատանքներում արտահայտել է ժամանակի խռովահույզ, անհանգիստ ոգին, աշխարհի կործանման, «Ահեղ դատաստանի» վախճանաբանական գաղափարները: Դյուրերի աշխատանքների համեմատ Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի փորագրապատկերներն ավելի թույլ են գծանկարի, հեռանկարի, տեխնիկական վարպետության և հուզական հագեցվածության տեսանկյունից: Ջիխեմի փորագրատախտակներն, ի տարբերություն վերը նշված փորագրիչների, չափերով զգալի փոքր են: Այդ է պատճառը, որ նա շատ դեպքերում չի կարողացել պատկերը ենթարկել մանրակրկիտ մշակման: Այդ ամենի հետ մեկտեղ, Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերը իր կրկնօրինակներում կարողացել է արտահայտել մարդկային տառապանքը, ավետարանական իրադարձությունների իր վերապրումը, քրիստոնեական գոհաբերության վեհ գաղափարները:

Վանանդեցիների հրատարակած գրքերն իրենց գեղարվեստական ձևավորման նուրբ ճաշակով համարվել են ժամանակի բարձրորակ տպագրություններ և օրինակ հանդիսացել հաջորդ հայ տպագրիչների համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վանանդեցիների հրատարակությունների համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնել հետևյալը.

1. Վանանդեցիների հրատարակչական գործունեությունը կազմեց հայ տպագրության պատմության երկրորդ ավելի զարգացած, բեղուն փուլը՝ շնորհիվ հրատարակած գրքերի տարբեր ժանրերի, մեծ տպաքանակի և հատկապես ավելի հարուստ գեղարվեստական հարդարանքի:
2. Վանանդեցիների քառորդարյա բազմակողմանի տպագրական գործունեությունը Ամստերդամում նպաստեց հայագիտության տարածմանը Եվրոպայում:
3. Վանանդեցիների հրատարակած գրքերի պատկերազարդման համակարգը մի կողմից շարունակել է հայկական միջնադարյան մանրանկարչության ավանդույթները, մյուս կողմից՝ ազդվել է արևմտաեվրոպական տպագիր գրքերից: Վերջինը պայմանավորված է Վանանդեցիների հրատարակությունների՝ եվրոպական միջավայրում հրատարակված լինելով և եվրոպական տպագիր գրքերի տպատախտակները (կլիշեները) օգտագործելու հանգամանքով:
4. Վանանդեցիների հրատարակություններում գեղարվեստական հարդարանքը հիմնականում ընդհանրական է: Գրքերում յուրաքանչյուր գլուխ ավարտվում է վերջնազարդով, իսկ յուրաքանչյուր նոր գլուխ սկսվում է անվանաթերթով ձևավորված գլխազարդով, շքեղ գլխատառով ու զարդագրով և խաչով ավարտվող լուսանցազարդով՝ նման ձեռագիր Ավետարանների անվանաթերթերին:
5. Խորանների, գլխազարդերի, զարդագրերի, լուսանցազարդերի վրա զգալի է հայկական միջնադարյան մանրանկարչության անմիջական ազդեցությունը, իսկ տիտղոսաթերթերի, գլխատառերի, վերջնազարդերի համար օգտագործվել են ԺԷ դարի արևմտաեվրոպական գրքերի գեղարվեստական ձևավորման տարրերը:
6. Վանանդեցիների հրատարակությունների զարդագրերը, գլխազարդերը, լուսանցազարդերը ստեղծել են հայոց ձեռագրական արվեստին տեղյակ ծաղկող փորագրիչներ, որպիսիք կարող էին լինել նկարիչ-հրատարակիչներ Մատթեոս Ծարեցին, Մատթեոս, Ղուկաս Վանանդեցիները: Սա նշանակում է, որ հայ հնատիպ գրքի հրատարակիչները միաժամանակ տվյալ գրքերը ձևավորող արվեստագետներ էին:
7. Վանանդեցիների հրատարակությունների պատկերազարդման համակարգում իրենց ուրույն տեղն ունեցող թեմատիկ փորագրապատկերների հեղինակը ծագումով գերմանացի, Հոլանդիայում իր գործունեությունը ծավալած, հայտնի փորագրիչ-նկարիչ Քրիստոֆել վան Զիխտս Կրտսերն է, որի փորագրանկարներն արված են երկայնակի փայտե փորագրության (քսիլոգրաֆիա) տեխնիկայով:

8. Պատկերագրական և ոճական հետազոտության միջոցով գտել ենք Վանանդեցիների հրատարակություններում օգտագործված փորագիր պատկերների մեծ մասի նախօրինակները:

9. Վանանդեցիների գրքերում զետեղված փորագրանկարների ստեղծման համար որպես նախօրինակ ծառայել են ԺԵ-ԺԷ. դարերի եվրոպական ամենահայտնի նկարիչների ու փորագրիչների աշխատանքները: Քրիստոֆել վան Ջիխեմ կրտսերը կրկնօրինակել է Ալբրեխտ Դյուրերի, Լուկաս վան Լեյդենի, Հենդրիկ Գուլցիուսի, Հանս Հոլբեյնի, Յոհաննես և Հիերոնիմուս Վիերիքսների, Յոհան Սադելերի, Կրիսպին վան դը Բրուսկի, Հանս Մեմլինգի, Մարտին դը Վուսի, վան դեռ Գուսի, Մարտին վան Հենսկերկի ստեղծագործությունները: Որոշ նկարիչների անվանատառերը Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերը թողել է նրանց պատկերներից արած փորագրանկարների վրա՝ AD - Ալբրեխտ Դյուրեր, HG - Հեն(դ)րիկ Գուլցիուս՝ կցելով նաև իրենը՝ CVS:

10. Փորագրանկարների պատկերագրությունն ու ոճը արտացոլում են ԺՁ. դարավերջի և ԺԷ. դարի առաջին կեսի Հոլանդիայի և, առհասարակ, Հյուսիսային Եվրոպայի կերպարվեստի հատկանշական գծերը: Դրանք աչքի են ընկնում տեսարանի կանոնական պատկերագրության մեջ հեղինակի կողմից ներմուծված կերպարներով, հազեցած են ավելի հարուստ, բազմաբովանդակ խորհրդաբանությամբ (Արևմուտքում պատկերագրությունն ավելի ազատ էր, քան Արևելքում): Պատկերների ոճը հետևում է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ բարոկկո ոճին:

11. Վանանդեցիների հրատարակությունների թեմատիկ պատկերները մեծամասամբ նվիրված են սուրբգրային թեմաներին, ինչը հատուկ էր նաև հայ միջնադարյան ձեռագրերին: Ի հավելումն վերջինների՝ այստեղ մեծ թիվ են կազմում նաև հինկտակարանային տեսարանները, որոնք այսուհետ տարածվում են հայ արվեստում:

12. Վանանդեցիների գրքերի միջոցով Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերի փորագրապատկերներն իրենց արտացոլումն են գտել ԺԷ. դարի և հետագա ժամանակաշրջանի՝ ինչպես հայ տպագիր գրքարվեստում, այնպես էլ հայկական ձեռագրարվեստում, կիրառական արվեստում, եկեղեցիների որմնանկարներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. **Սիմոնյան Ա.**, Քրիստոսի Ծննդյան պատկերագրությունը Թովմա Վանանդեցու հրատարակությունների փորագրանկարներում, «Էջմիածին», 2015, Զ., էջ 119-129
2. **Սիմոնյան Ա.**, Զարդանախշերը Թովմա Վանանդեցու հրատարակություններում, «Էջմիածին», 2015, ԺԱ., էջ 61-75
3. **Սիմոնյան Ա.**, Ոսկանյան Աստվածաշնչի և ԺԷ. դարի հայերեն ձեռագիր Աստվածաշնչերի պատկերագրական աղբյուրները, «Էջմիածին», 2016, Ժ., էջ 61-75
4. **Սիմոնյան Ա.**, Հայտնության փորագրապատկերները Ոսկան Երևանցու և Թովմաս Վանանդեցու հրատարակություններում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2018, Հ^մ 3 (654), սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 278-299
5. **Սիմոնյան Ա.**, Եպիսկոպոս Թովմաս Վանանդեցին և նրա հրատարակությունները, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2018, Հ^մ 4 (77), էջ 277-285
6. **Simonyan A.**, The stylistic and pictorial peculiarities of “The Last Supper” and “Washing of the Feet” engravings in the Vanandetsi publications, *Revue des études sud-est europeenes. Journal of South-East European Studies*, Tome LVII (N^o 1-4), 2019, pp. 253-272
7. **Սիմոնյան Ա.**, Մաշտոցյան Մատենադարանի Հ^մ 3807 Խորհրդատետրի տերունական մանրանկարների փոխառնչությունները Վանանդեցիների հրատարակությունների փորագրանկարների հետ, «Հայագիտական հանդես», 2020, Հ^մ 1 (46), էջ 123-136
8. **Simonyan A.**, Les caractéristiques stylistiques et iconographiques de la gravure "L'Annonciation de la Vierge Marie" dans les publications des Vanandetsi, «Բանբեր Հայագիտության», 2020, Հ^մ 1 (22), pp. 153-167
9. **Սիմոնեան Ա.**, Ոսկանեան Աստուածաշնչի պատկերները, խմբագրութեամբ եւ առաջաբանով Գ. Տէր-Վարդանեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2017, 143 էջ

Симонян Арпине Временовна
Художественное оформление изданий типографии Ванандеци в
Амстердаме

Резюме

Основной целью диссертации является всестороннее изучение и искусствоведческий анализ художественного оформления изданий Ванандеци, в особенности в контексте традиций европейского книгопечатания и армянской миниатюры позднего средневековья.

Актуальность темы. Актуальность темы обусловлена программой по изучению наследия армянского книгопечатания.

Научная новизна работы. Тема диссертационной работы является новой в армянском искусствоведении, поскольку по сей день художественное оформление изданий Ванандеци не рассматривалось столь широко – как по охвату материала, так и по постановке вопросов. Впервые сделана попытка всесторонне представить тематические гравюры и способ гравировки в изданиях Ванандеци, их стилистические и образные особенности, иконографию гравюр, их авторов, «географию» клише.

Методы исследования. Диссертация основана на изучении разносторонних исследований на родном и иностранных языках, в том числе и научных статей, с использованием описательного, иконографического, стилистического, рукописоведческого, сравнительного, источниковедческого и технико-технологического методов.

Теоретическое и практическое значение диссертации. Не существует отдельной целостной работы, посвященной художественному оформлению изданий Ванандеци, где были бы рассмотрены использованные в них гравюры и орнаменты. Результаты проведенных нами исследований восполняют не только историю и теорию армянского искусства и станут материалом для новых изысканий, но и впишут еще одну страницу в историю книгопечатания, в частности – в историю армянской книги и армяно-европейских художественных связей.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав – с соответствующими подглавами, выводов, списка использованной литературы и электронных ресурсов, а также приложения.

Глава 1 - «Армянская типография Амстердама и Ванандеци» состоит из трех подглав, в которых рассмотрены вопросы формирования армянского книгопечатания, история основания типографии «Святой Саргис и Святой Эчмиадзин», типографской деятельности и изданий ее основателя Маттеоса Цареци и последовавших за ним деятелей – Аветиса Кличенци, Воскана Ереванци, а также Ванандеци.

Глава 2 – «Система иллюстрирования изданий Товмаса Ванандеци» состоит из двух подглав, в которых на основе сравнительного метода рассматривается, с одной стороны, влияние армянской миниатюры, а с другой – системы иллюстрирования западноевропейских печатных книг 16-17вв. на художественное оформление изданий Ванандеци. В общих чертах рассматриваются особенности техники ксилографии. Подробно излагается биография автора тематических гравюр, немца по происхождению Кристофеля ван Зихема-младшего, работавшего в Голландии, говорится о его изданиях и прототипах использованных в них гравюр.

Глава 3 – «Тематические рисунки в изданиях Ванандеци» состоит из четырех подглав. Здесь тематические гравюры подробно анализируются с иконографической и стилистической точек зрения. Речь идет о гравюрах на библейские темы, которыми иллюстрированы «Шаракноц» (сб. духовных и светских текстов) 1702 года издания и «Часослов» 1705 года. Большая часть этих гравюр использована и в других изданиях Ванандеци. На основе сравнительно-аналитического метода нами представлены стилистико-технические и образные характеристики гравюр, их авторы, а также отражение этих образов в армянском искусстве позднего средневековья (в рукописях, фресках, предметах из серебра, в церковном убранстве).

Результаты работы обобщены в разделе «Выводы».

Simonyan Arpine

The Artistic Decoration of Publications of the Vanandetsis' Printing House in

Amsterdam

Summary

The main purpose of the thesis is the comprehensive study and analysis of the artistic decoration of the Vanandetsis' publications, especially considering them in the context of the European printed book and Armenian late medieval miniature art.

Relevance of the topic: The relevance of the topic is conditioned by the project of the study of the Armenian printing heritage. The artistic decoration of the Vanandetsis' publications has not been fully studied so far, and this thesis, summing up the scientific materials, is the first step towards it.

Novelty of the thesis: The topic of the thesis itself is a novelty in Armenian art history, since the artistic decoration of the Vanandetsis' publications have not been studied with such inclusion and questioning before.

Study Methods: The thesis is based on various and multilingual studies and scientific articles. Particularly descriptive, iconographic, stylistic, codicological, parallel comparative, source-based, techno-technological methods have been used.

The theoretical and practical significance of the thesis: There is no separate complete work on the artistic decoration of the Vanandetsis' publications, where the engravings and ornaments of the latter would be revealed. The results of this thesis will complement not only the history and theory of Armenian art as a material for new courses, but also the pages of typography, the history of the Armenian book and the Armenian-European relations.

The structure of the thesis: The thesis consists of an introduction, three chapters, corresponding subchapters and conclusions. The thesis is followed by a list of literature, as well as a list of websites and two appendices.

Chapter I. The Armenian Printing House of Amsterdam and the Vanandetsis, consists of three subchapters, where we touched upon the origins of the Armenian printing, the history of the founding of the St. Sarkis and St. Etchmiadzin printing house in Amsterdam, the founder, Matteos Tsaretsi, and

activities and publications of Avetis Ghlichentsi, Voskan Yerevantsi and the Vanandetsis.

Chapter II. The Illustration System of Tovmas Vanandetsis' Publications, consists of two subchapters, which show, in a comparative way, that the artistic decoration of the Vanandetsis' publications was influenced by medieval Armenian miniature painting on the one hand, and Western European printed books of the 16th and 17th centuries, on the other. In a general way, we have touched upon the peculiarities of the technique of longitudinal woodcut (xylography). The biography of the author of the thematic engravings who had German origin, Christopher van Sichem the Younger, and his activity in the Netherlands, as well as the publications and the prototypes of the engravings inserted in those publications are described in detail.

Chapter III. The Thematic Illustrations of the Vanandetsis' Publications, consists of four subchapters. The thematic engravings were subjected to detailed iconographic and stylistic analysis. We mainly referred to the engravings depicting Biblical stories inserted in the Hymnarium published in 1702 and the Horologion published in 1705, the majority of which is also reflected in other publications of the Vanandetsis. Through the method of comparative examination we have presented the author of each engraving, the stylistic and pictorial features, as well as the reflection of these images in late medieval Armenian art (in manuscripts, frescoes, silversmithing and church decoration). This chapter provides an extensive iconographic analysis of the engravings of the Vanandetsis' publications.

The results of the work are summarized in the "Conclusions" section.

A handwritten signature in black ink, appearing to read 'E. Chirpich', with a decorative flourish underneath.